ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5332-Ա « 30 » հոկտեմբերի 2026թ.

ՀԵՐՄԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ԽԱՉԱՏՈՒՐ ՍԱՄՈՒԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.47 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 130-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Հերմինե Նալբանդյանի հետ 2021 թվականի նոյեմբերի 1-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-ին կետի «ա» ենթակետը և 5-րդ գլխի 5.1-ին կետը՝

1. Հերմինե Սամվելի Նալբանդյանին՝ 2026 թվականի նոյեմբերի 2-ից ազատել «Երևանի Խաչատուր Սամուելյանի անվան հ.47 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2021 թվականի նոյեմբերի 1-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի Խաչատուր Սամուելյանի անվան հ.47 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Ռուզաննա Ավագյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ